«Ինֆուզիոն և տրանսֆուզիոն թերապիա։ Պարէնտերալ սնուցում»

2023 թվականի ապրիլի 25-ից մայիսի 10-ը (կրկնողաբար) Երևան քաղաքում, Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի կողմից կանցկացվի «Ինֆուզիոն և տրանսֆուզիոն թերապիա։ Պարէնտերալ սնուցում» թեմայով դասընթաց։ Ծրագիրը հաստատվել է ՀՀ առողջապահության նախարարի հրամանով։ Թիրախային լսարանը՝ բուժքույրեր, մանկաբարձներ։ Մասնակիցներին կշնորհվի ՇՄԶ 17 տեսական և 25 գործնական կրեդիտ։ Լրացուցիչ տեղեկատվության համար զանգահարել 010583101 հեռախոսահամարով։

ԾՐԱԳԻՐ

«ԻՆՖՈՒԶԻՈՆ և ՏՐԱՆՍՖՈՒԶԻՈՆ ԹԵՐԱՊԻԱ։ ՊԱՐԷՆՏԵՐԱԼ ՍՆՈՒՑՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ԴԱՍԸՆԹԱՑԻ

2022թ.-ից կրկնողաբար, ք. Երևան (ԵՊԲՀ Հետբուհական և շարունակական կրթության կենտրոնի անէսթեզիոլոգիայի և ինտենսիվ թերապիայի ամբիոն՝ «Էրեբունի բժշկական կենտորն»)

Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան

Շաբաթ 1	
Օր 1	
10:00-11:30	**Դասախոսություն** Սիրտանոթային համակարգի համառոտ անատոմիան և ֆիզիոլոգիան։ Նյարդային համակարգի համառոտ անատոմիան և ֆիզիոլոգիան։ Մաշկի անատոմիան և ֆիզիոլոգիան։ Ոսկրային համակարգի համառոտ անատոմիան և ֆիզիոլոգիան։
11:30-11:45	Ընդմիջում
12:00-14:30	**Դասախոսություն** Օրգանիզմի ջրաաղային հավասարակշռությունը։ Օրգանիզմի հեղուկ միջավայրերը։ Հոմեոստազ։ Ջրաաղային հավասարակշռության կարգավորման մեխանիզմները
13:15-13:30	Ընդմիջում
13:30-15:30	**Գործնական աշխատանք** Պացիենտի զննում, ջրաաղային հավասարակշռության գնահատման նպատակով իրականացվող կլինիկական և լաբորատոր հետազոտություններ։ Արյան և մեզի նմուշառման տեխնիկան և կանոնակարգը
Օր 2	
10:00-11:30	**Դասախոսություն** Հեղուկի փոխանակության խանգարումներն ըստ ծավալի և օսմոտիկության։ Հիմնական էլեկտրոլիտային հավասարակշռության խանգարումները
11:30-12:00	Ընդմիջում
12:00-14:30	**Գործնական աշխատանք**

	Ինֆուզիոն հեղուկների տեսակները։ Համեմատական բնութագիրը։ Ներմուծման ցուցումները և հակացուցումները։ Ներմուծման արագության հաշվարկը։
Օր 3	
10:00-12:00	**Գործնական աշխատանք** Ինֆուզիոն թերապիայի իրականացման նպատակով կիրառվող միջոցները և սարքավորումները. Հեղուկների կոնտեյներներ։ Համակարգեր։ Կաթետերներ։ Միակցման պարագաներ։ Ֆիլտրեր։ Կանուլաներ։ Կենտրոնական երակային կաթետերներ։ Ինֆուզիոն սարքավորումներ, պոմպեր։ Հեղուկների, արյան տաքացուցիչներ։ Ինֆուզիոն մանժետներ։
12:00-12:30	Ընդմիջում
12:30-14:30	**Գործնական աշխատանք** Ինֆուզիոն թերապիայի իրականացում. Ցուցումները։ Հիվանդի գնահատումը։ Հիվանդի նախապատրաստումը։ Կաթետերի տեղադրման տեղի որոշումը։ Կաթետերի ընտրությունը։ Կաթիլային համակարգի լիցքավորումը; Պերիֆերիկ երակի կաթետերիզացիա։
Օր 4	
10:00-12:00	**Գործնական աշխատանք** Հիվանդի կրթումը և խնամքը. Հիվանդի գնահատում, խնամքի պլան։ Կաթետերի խնամք։ Վիրակապի փոխում։ Փաստաթղթավարություն։ Ինֆուզիոն թերապիայի ավարտը. Գնահատում։ Կաթետերի հեռացում։ Փաստաթղթավարում։
12:00-12:30	Ընդմիջում
12:30-14:30	**Գործնական աշխատանք** Ինֆուզիոն թերապիայի բարդությունները, դրանց կանխարգելման և կառավարման միջամտությունները. Տեղային բարդություններ /հեմատոմա, ինֆիլտրատ, ֆլեբիտ, թրոմբոֆլեբիտ, հյուսվածքի նեկրոզ/։ Համակարգային բարդություններ /օդային էմբոլիա, թրոմբոտիկ բարդություններ, հիպերվոլեմիա, հիպոթերմիա, ալերգիկ ռեակցիաներ, անաֆիլաքսիա, սեպտիկ բարդություններ և այլ/։ Կենտրոնական երակային կաթետերների հետ կապված բարդություններ։
Օր 5	
10:00-11:30	**Դասախոսություն** Թթվահիմնային հավասարակշռության խանգարումները. Մետաբոլիկ ացիդոզ։ Մետաբոլիկ ալկալոզ։ Շնչական ացիդոզ։ Շնչական ալկալոզ։ ԹՀՀ ստուգման նպատակով արյան նմուշառման տեխնիկան։ Արդյունքների արագ վերծանման եղանակները
11:30-11:45	Ընդմիջում
11:45-13:15	**Դասախոսություն** Հիվանդություններ և ախտաբանական վիճակներ, որոնք բերում են ջրաաղային փոխանակության և թթվահիմնային հավասարակշռության խանգարումների. Սրտային անբավարարություն։ Հիպովոլեմիկ շոկ։ Հետվիրահատական շրջան։ Գանգուղեղային վնասվածք։ Սուր պանկրեատիտ։
13:15-13:30	Ընդմիջում
13:30-15:00	**Դասախոսություն** Երիկամային անբավարարություն։ Էնդոկրին համակարգ։ Լյարդային անբավարարություն։ Այրվածքներ։ Հղիություն։ Աղեստամոքսային խանգարումներ /շարունակություն/
Շաբաթ 2	
Օր 1	
10:00-11:30	**Դասախոսություն** Ինֆեկցիոն հսկողությունը ինֆուզիոն-տրանսֆուզիոն թերապիայի և պարէնտերալ սնուցման ընթացքում։ Իմուն համակարգ, իմուն

	պատասխան: Էկզոգեն և էնդոգեն կոնտամինացիա: Հիմնական ախտածին մանրէներ: Կաթետեր-կախյալ վարակ: Ներմուծման վայրի կոնտամինացիա
11:30-12:00	Ընդմիջում
12:00-14:30	**Գործնական աշխատանք** Տեխնիկական սխալներ: Կաթետեր-կախյալ վարակման կանխարգելումը: Ինֆեկցման ախտորոշման մեթոդները: Արյան նմուշառման իրականացում բակտերիոլոգիական քննության նպատակով: Կաթետերների բակտերիոլոգիական քննություն: Հակաբակտերիալ հիմնական միջոցները
Օր 2	
10:00-11:30	**Դասախոսություն** Ինֆուզիոն թերապիան մանկաբուժությունում. Անատոմիական և ֆիզիոլոգիական առանձնահատկությունները: Երեխաների մոտ ջրաաղային և թթվահիմնային հավասարակշռության խանգարումներով ուղեկցվող հիմնական հիվանդությունները և ախտաբանական վիճակները:
11:30-12:00	Ընդմիջում
12:00-14:30	**Գործնական աշխատանք** Երեխաների ջրաաղային և թթվահիմնային հավասարակշռության կլինիկական գնահատում: Ֆիզիկական քննություն: Լաբորատոր հետազոտություններ: Մանկաբուժությունում կիրառվող հիմնական հեղուկներ և դեղորայքային միջոցներ: Երեխաների պերիֆերիկ երակների կաթետերիզացիայի առանձնահատկությունները: Հիվանդի և հարազատների կրթում:
Օր 3	
10:00-11:30	**Դասախոսություն** Ինֆուզիոն թերապիան տարեց հիվանդների մոտ. Տարիքի հետ ջրաաղային փոխանակության փոփոխությունները: Տարեց հիվանդի գնահատումը: Տարեցներին հատուկ խնդիրները: Հետվիրահատական շրջանի առանձնահատկությունները
11:30-12:00	Ընդմիջում
12:00-14:30	Պարէնտերալ սնուցում. Սնուցման խանգարումներ: Պարէնտերալ սնուցման ցուցումները: Անհրաժեշտ պարագաները, ներմուծվող խառնուրդները: Հիվանդություններ, որոնք բերում են սնուցման խանգարումների: Հիվանդի գնահատումը: Խառնուրդների ներմուծման ռեժիմները: Հիվանդի մոնիթորինգը: Բարդությունները և նրանց կանխարգելումն ու վերացումը: Փաստաթղթավարումը:
Օր 4	
10:00-11:30	**Դասախոսություն** Տրանսֆուզիոն թերապիա /արյան բաղադրիչների փոխներարկում/. Արյան խմբային և Ռեզուս-պատկանելիություն: Արյուն և արյան բաղադրիչներ: Փոխներարկման ցուցումները, հակացուցումները:
11:30-12:00	Ընդմիջում
12:00-15:00	**Գործնական աշխատանք** Պացիենտի նախապատրաստումը արյան փոխներարկման: Արյան փոխներարկման անվտանգության նախազգուշական միջոցառումները: Արյան տարբեր բաղադրիչների փոխներարկման տեխնիկան; կիրառվող համակարգերը, լրացուցիչ տեխնիկական միջոցները: Փաստաթղթավարումը:
Օր 5	
10:00-12:00	**Գործնական աշխատանք** Հեմոտրանսֆուզիոն բարդություններ՝ սուր /հեմոլիտիկ, ոչ հեմոլիտիկ, ալերգիկ, անաֆիլակտիկ ռեակցիաներ, ցիրկուլար ծանրաբեռնում, բակտերյալ վարակ, հիպոթերմիա, ցիտրատային թունավորում/ և ուշացած /ալլոիմունիզացիաներ, երկաթի կուտակում,

	«Պատվաստանյութն ընդդեմ տիրոջ» հիվանդություն, արյունածին վարակներ և այլ/, դրանց կանխարգելումը և կառավարումը
12:00-12:30	Ընդմիջում
12:30-15:00	**Գործնական աշխատանք** մասնավոր դեպքերի քննարկում, տեսական գիտելիքների և գործնական հմտությունների գնահատում

Թիրախային լսարան՝ բուժքույրեր, մանկաբարձներ։
Մասնակիցների ակնկալվող թվաքանակ՝ 1-10 հոգի։

Դասընթացավար՝ Հասմիկ Քոչարյան